

35(501)  
15.12.2017

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԻՑ

Lusarar

## ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԵՐԿՐԻ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԱՆԳԵՂ

«Արցախի ժողովուրդը... հավատարիմ մնալով հայրենիքում ազատ ապրելու և արարելու իր նախնիների երազանքին և վառ պահելով ազատության համար պայքարում նահատակվածների հիշատակը, իրականացնելով իր ինքնիշխան և անօտարելի իրավունքը, ընդունում է Արցախի Հանրապետության Սահմանադրությունը»: Այս տողերը վերցված են մեր երկրի հիմնական օրենքից, որի ամեն մի բառի մեջ մեր ժողովրդի դարավոր մաքառումների պատմությունն է խտացված, և կա ապագային միտված իմաստուն հղում, որով պիտի ավելի հզորանանք ու հարատևենք:

Ամեն մի երկրի Սահմանադրությունն արտացոլում է նրա արժեքահամակարգային մոտեցումները քե՛ պետական ինստիտուցիոնալ համակարգը կարգավորելու առումով և քե՛ համակեցության կանոնները հստակեցնելու տեսանկյունից: Որպես պետության հիմնական օրենք՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությունը հանդիսանում է հասարակական հարաբերությունները կարգավորելու նորմատիվամիտ բազա և կանխորոշում է սոցիալական գործընթացների օրենսդրական կանոնակարգման տրամաբանությունը: Ասել է քե՛ այն լիովին համապատասխանում է ժողովրդավարական պետություններին ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Եվրոպական սոցիալական խարտիայի, սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքների մասին կոնվենցիայի դրույթներին և այլն:

Օրինապաշտությունը արցախցիներին համար դարավոր կենսակերպ է: Դեռևս 5-րդ դարում՝ Վաչագան Բարեպաշտի օրոք, Աղվենի վանքում ընդունվեց «Կանոնական սահմանադրությունը»: Դա ժողովուրդների պատմության մեջ ընդունված առաջին իրավական փաստաթղթերից էր, որոնցից հետագայում արտածվել են համապատասխան մյուս օրենքները: «Կանոնական սահմանադրության» պարագայում ապահովվել է այն ժամանակներում հազվագյուտ ընթացակարգ՝ նախ մշակվել են օրենքները (կանոնները), որից հետո նախագիծը դրվել է քննարկման և այնուհետև՝ ընդունման: Հատկանշական է, որ Վաչագան Բարեպաշտը, օժտված լինելով արքային շնորհված շատ լիազորություններով, այնուհանդերձ, սահմանադրությունը ոչ քե ընդունել է կամայական, այլ նախապես դրել է քննարկման, որին մասնակցել են հասարակական-կրոնական տարբեր խավերի ներկայացուցիչներ: Ժողովրդավարության այսպիսի դրսևորումը բնորոշ է միայն այն ժողովուրդներին, որոնց ավանդույթներում ու սովորույթներում գերակա են արդարամտությունը, սկզբունքայնությունն ու արժանապատվությունը:

Հարյուրամյակներ հետո արցախահայությունն ընդունեց իր կամոք հռչակված պետականության մայր փաստաթուղթը՝ Սահմանադրությունը, որով վերստին հաստատեց հավատարմությունն առ նախնյաց օրինապաշտություն, իսկ հետագա լրացումներով սահմանադրական մակարդակում ամրագրվեցին պետական ինքնիշխանության հիմնարար սկզբունքները: Դա ևս մի կարևոր քայլ էր պետականության ամրապնդման ճանապարհին:

Սահմանադրականությունը նաև երկրի ու ժողովրդի ճակատագրի հանդեպ պատասխանատվության գիտակցումն է. հավատարիմ մնալ ԱՀ Սահմանադրության դրույթներին՝ նշանակում է վստահորեն դնել խաղաղ և բարեկեցիկ ապագայի ամուր հիմքերը: Սա է մեր այսօրվա ու վաղվա գլխավոր խնդիրը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԿԻՐՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ



Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության փոխանցմամբ՝ ԱՀ նախագահ Բակո Սահակյանը ղեկավարել է աշխատանքային խորհրդակցություն՝ նվիրված կրթական մի շարք ծրագրերի իրականացմանը:

Աշխատանքների ընթացքի մասին տեղեկություններ է հաղորդել կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը:

Երկրի ղեկավարն ընդգծել է, որ նախանշված ծրագրերի հաջող իրականացման համար անհրաժեշտ է համակարգված աշխատանք օրենսդիր եւ գործադիր քեւերի միջեւ, ինչպես նաեւ սերտ համագործակցություն Մայր Հայաստանի եւ Սփյուռքի հետ:

## ԱՄՓՈՓՎԵՅԻՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՆԿԻՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԱԿԵՐՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դեկտեմբերի 10-ին Ստեփանակերտում անփոփոխվեցին 20-րդ դարասկզբի ակադեմիկոս իրավապաշտպան, գրող և հրապարակախոս Զապել Եսայանի ժառանգությանը նվիրված և «Ինչու են մարդու իրավունքները կարևոր» խորագիրը կրող աշակերտական շարադրությունների երկրորդ մրցույթի արդյունքները:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, մրցույթային հանձնաժողովի նախագահ Արման Թաթոյանը, ԱՀ կրթության և գիտության նախարար Նարինե Աղաբալյանը, մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարի տեղակալ Գայանե Գրիգորյանը, մրցույթային հանձնաժողովի անդամներ, հատուկ մրցանակներ սահմանած կառույցների ներկայացուցիչներ և այլք: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ և ԱՀ մարդու իրավունքների պաշտպանները, Զապել Եսայանի թոռը՝ ԵՊՀ դոցենտ Ալեքսանդր Եսայանը: Տեսաուղերով ներկայացրին ողջունեցին մրցույթի համակարգմանը միջոցառող Սարյանը, մրցույթային հանձնաժողովի անդամ, ԱՄՆ հայ իրավաբանական միության խորհրդի անդամ Կարո Ղազարյանը:

Մրցույթի արդյունքներով առաջին մրցանակային տեղը զբաղեցրել է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի

աշակերտ Մարատ Հայրապետյանը, երկրորդ մրցանակային տեղը՝ Շուշիի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Լինա Միրզոյանը, երրորդ մրցանակային տեղը՝ Ասկերանի շրջանի Պատարա գյուղի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Սիրուն Գաբրիելյանը: Առաջին մրցանակային տեղը զբաղեցրած մասնակիցը պարգևատրվեց iPod պլանշետով, երկրորդ մրցանակային տեղը զբաղեցրած մասնակիցը՝ iPod պլանշետով, իսկ երրորդ տեղը զբաղեցրածը՝ TSD ընկերության տրամադրած ArmPhone բջջայինով:

Եզրափակիչի մյուս 9 մասնակիցների համար հատուկ մրցանակներ են սահմանել Հայաստանի և Արցախի օմբուդսմենները, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը, Արցախի մարդու իրավունքների առաջին պաշտպան Յուրի Հայրապետյանը, Երևանի քաղաքապետարանի ավագանու կրթության, մշակույթի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արայիկ Հարությունյանը, Թուֆենկյան բարեգործական հիմնադրամը, «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամը, Հայկական հետազոտությունների



առցիցաձեռն (ԱՄՆ): Եզրափակիչ փուլի մասնակիցներն ստացան նաև գրքեր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի, ԵՊՀ ռեկտորի, ինչպես նաև «Անտարես» հոլդինգի կողմից: Մրցույթի բոլոր մասնակիցները ստացան «Թունո» ստեղծարար կենտրոնի հայտարարած մրցույթում հաղթող դիզայնով շապիկներ, ինչպես նաև հուշանվերներ՝ Զ. Եսայանի ընտանիքի կողմից:

Հարկ է ընդգծել, որ այս տարի մրցույթի երկրորդ փուլ անցած 12 մասնակիցներից 10-ը Արցախի շրջանների դպրոցականներ են:

Միջոցառմանը ներկայացրել են հնարավորություն ունեցան ունկնդրելու Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշ-

տական ուսումնարանի սաների կատարումները:

Եզրափակիչ խոսքում Ռ.Սելիջյանը գոհունակությամբ ընդգծեց, որ մրցույթի աշխարհագրությունը մեծանում է, իսկ աշխատանքների որակը՝ բարձրանում: «Ուրախալի է, որ եզրափակիչ փուլ անցած 12 մասնակիցներից 10-ը ներկայացնում են Արցախի շրջանների դպրոցները», - նշեց ԱՀ մարդու իրավունքների պաշտպանը: Նա նաև խոստացավ 2018թ. գարնանը մրցույթի եզրափակիչ փուլ անցած աշակերտների համար կազմակերպել կարճատև ուսումնական այց երևան:

ՄԻՊ աշխատակազմ

## ԱՐԹՈՒՐ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ՝ ԿԵՆՂԱՆԻ ԼԵԳԵՆԴ

Արցախի մարզական անցուղարձով հագեցած մարզաշխարհում տեղի ունեցավ աննախադեպ իրադարձություն: Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում ղեկավարելու 9-10-ը կայացած Կիոկուշին կարատեի աշխարհի միության (KWU) աշխարհի երրորդ առաջնության մինչեւ 60 կգ քաշային կարգում Կիոկուշին կարատեի Հայաստանի հավաքականի մարզիկ, Արցախի Օյամա կիոկուշինկայ կարատե դո Ֆեդերացիայի մարզիչ Արթուր Առուշանյանը դարձավ KWU վարկանիշով աշխարհի կրկնակի չեմպիոն:

«Լուսարար»-ի նախորդ համարներից մեկում գետնոված հարցազրույցում Եվրոպայի եռակի եւ աշխարհի չեմպիոն, սեւ գոտի երրորդ դաս Արթուր Առուշանյանը նշել էր, որ պատրաստվում է մասնակցել այդ հեղինակավոր մրցաշարին եւ կցանկանար ռիմգուլ հանդիպել Ռուսաստանը ներկայացնող ուժեղագույն մարզիկ, գործող չեմպիոն Ֆարիդ Կաստունովի հետ: Նպատակալաց մարզիկը նպատակին հասավ. եզրափակիչում «բաջերը դուրս եկան բաջերի դեմ», մինչդեռ Արթուրը հաղթեց: Պետք է նշել, որ Ա. Առուշանյանը աշխարհում դեռևս

միակ մարզիկն է, որը հանդիսանում է այս հեղինակավոր մրցաշարի կրկնակի չեմպիոն:

Արթուր Առուշանյանը ցույց տվեց մարտարվեստի տիրապետելու բարձրակարգ



կարողություններ, հմուտ մարտական տեխնիկա եւ այնպիսի կարատե, որը զարմացնում է և հիշվում անգամ մասնակիցների կողմից: Յուրաքանչյուր մարզիկ իր մարզական ճանապարհն անցնելիս բախվում է այնպիսի հանգամանքների, որոնք կարող են խոչընդո-

տել հետեւելու իր ուղուն: Արդյոք դա նշանակում է, որ նա պետք է դուրս գա այդ միջավայրից, որում շարժվում է: Արթուրի համար դա այդպես չէ: Եթե հնարավորություն սահմաններում մարդ նախանձախնդրորեն է մոտենում իր ուղուն եւ կարողանում է մնալ աշխատասեր, ապա ընդհանուր առմամբ այդ հանգամանքներից ոչ մի վնաս չի կրում: Արթուրն ապացուցեց, որ մարտիկի ուղին «ուղիղ է ինչպես ճառագայթը եւ սուր՝ ինչպես ածելին» կարգախոսը: Կիոկուշինը անհրաժեշտ պահին ճիշտ քայլ կատարելու կարողություն է, ինչը փայլուն ստացվեց Արթուր Առուշանյանի մոտ:

Արթուր Առուշանյանը դարձավ համաշխարհային կիոկուշինի աստղ: Նրանով հիանում են եւ հպարտանում, նրան հետեւում են եւ օրինակ վերցնում: Մարզական եւ մարտական առանձնահատուկ կարողությունների տեր, մարտավարության կանոններին բարձրակարգ տիրապետող, բարձրաստիճան տիտղոսների հազվագյուտ կողմ է միաժամանակ վարպետներին վայել համեստությամբ օժտված մարտիկը թերեւս արժանի է կենդանի լեգենդ բնորոշմանը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԿԱՐԳ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ Հ Ր Ա Մ Ա Ն

4 դեկտեմբերի 2017թ.

N 369/Մ

2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅՎԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Արցախի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- 1. Հաստատել 2017-2018 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:
- 2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը տպագրել «Լուսարար» պաշտոնաթերթի առաջիկա համարում և տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:
- 3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Ն. ԱՐԱՐԱԼՅԱՆ

Հավելված՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 4-ի N 369/Մ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅՎԱՅՄԱՆ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետև՝ Հաստատություն) **4-րդ և 9-րդ դասարաններում** անցկացվում են համապատասխանաբար՝ գիտելիքների ստուգում և ավարտական քննություններ՝ **հունիսի 1-24-ը**:

2. Հաստատությունների **12-րդ դասարաններում** անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ **դեկտեմբերի 25-29-ը** և/կամ **հունիսի 1-23-ը**: 12-րդ դասարանի սովորողը դեկտեմբեր ամսին հանձնում է միայն այն առարկա(ներ)ի պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով:

3. **Դեկտեմբերին** կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները **մինչև դեկտեմբերի 5-ը** գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենը **դեկտեմբերի 5-ից մինչև 11-ը** ներառյալ քննություններ հանձնողների ցուցակ-հայտերը փոխանցում է Արցախի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոն (այսուհետև՝ ԳԹԿ):

4. **Հունիս** ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու ցուցակ-հայտերը հաստատության տնօրենը նույն ձևով ԳԹԿ է փոխանցում **փետրվարի 1-ից մինչև փետրվարի 28-ը ներառյալ**:

5. Քննությունները սկսվում են առավոտյան **ժամը 10:00-ին**: Սովորողները Հաստատություն են ներկայանում ժամը 900-ին:

6. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար գերազանցության մեդալի (այսուհետև՝ Մեդալ) հավակնորդ սովորողները թույլատրվում են քննությանը՝ համաձայն Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն (այսուհետև՝ Նախարարություն) ներկայացված ցուցակի:

7. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների հա-

մար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:

8. **4-րդ դասարանում** գիտելիքների ստուգումն անցկացվում է.

- 1) «Մայրենի» առարկայից՝ թելադրություն. քննությանը տրվում է 45 րոպե.
- 2) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր. քննությանը տրվում է 45 րոպե.
- 3) «Ռուսաց լեզու» առարկայից՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում.
- 4) Գիտելիքների ստուգման առաջադրանքները (առնվազն 4 տարբերակ) կազմում են Հաստատության մեթոդիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների. առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից.
- 5) Քննական առաջադրանքների ծրարը բացվում է գիտելիքների ստուգման օրը՝ քննասենյակում, սովորողների ներկայությամբ.
- 6) Գրավոր աշխատանքը գնահատվում է 10 միավորային համակարգով.
- 7) Գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչը և տնօրենի կողմից մշակված ներկայացուցիչը:
- 9. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար գրավոր քննության ժամանակ կարող է տրվել լրացուցիչ 30-ից 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:
- 10. **4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում** անցկացվող «Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն» (բանավոր, ռուսերենով ուսուցմամբ համապատասխան դասարանների համար) առարկայի քննական առաջադրանքների հարցաշարերը և հարցատոմսերը կազմում են տվյալ Հաստատության առարկայական մեթոդական միավորումները՝ Նախարարության կողմից երաշխավորված դասագրքերի և նյութերի հիման վրա:
- 11. **9-րդ դասարանում ավարտական և 12-րդ դասարանում պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից**: Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից

կամ ձեռնարկներից, շտեմարաններից:

- 1) «Ֆիզիկուլտուրա» առարկայից՝ 9-րդ դասարանում պետական ավարտական քննությունը, **12-րդ դասարանում** ամփոփիչ ստուգարքը ընդունվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետևյալ կազմով. հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ: Քննությունը կամ ստուգարքը անցկացվում են? համաձայն Նախարարության կողմից հաստատված՝ Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 9-րդ և 12-րդ ավարտական դասարանների «Ֆիզիկուլտուրա» առարկայի քննությունների նորմատիվային պահանջների, քննության գնահատումը՝ **10 միավորային** համակարգով:
- 12. **9-րդ դասարանի** ավարտական քննություններն անցկացվում են՝
  - 1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ փոխադրություն. քննությանը տրվում է 90 րոպե.
  - 2) «Գրականություն» առարկայից՝ բանավոր.
  - 3) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր. քննությանը տրվում է **120 րոպե**.
  - 4) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ) առարկայից՝ բանավոր՝ սովորողի ընտրությամբ.
  - 5) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկայից՝ գրավոր՝ սովորողի ընտրությամբ. քննությանը տրվում է **120 րոպե**.
  - 6) «Հայոց պատմություն» առարկայից՝ բանավոր.
  - 7) «Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար:
  - 8) «Ֆիզիկուլտուրա» առարկայից՝ ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ մինչև քննաշրջանի սկսելը (նորմատիվների հանձնում) օրը որոշում է հաստատությունը.
  - 9) **9-րդ դասարանում** անցկացվող «Հայոց լեզու և գրականություն» գրավոր քննության (փոխադրություն) կազմակերպման, անցկացման և գնահատման համար հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով.
  - 10) հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տնօրենը կամ նրա նշանակած ուսուցիչը (հանձնաժողովի նախագահ), տվյալ դասարանում առարկան դասավանդող ուսուցիչը

(ստուգող ուսուցիչ) և ընթերական (տվյալ կամ հարակից առարկայի մասնագետ).

- 11) սովորողները քննասենյակում տեղավորվում են վիճակահանության միջոցով.
- 12) քննության ընթացքում քննասենյակում կարող են գտնվել միայն հանձնաժողովի անդամները.
- 13) սովորողները գրավոր աշխատանքը գրում են կապույտ գույնի միջուկով, տնօրենի կողմից կնքված և ստորագրված աշակերտական տետրում կամ առնվազն 4 թերթից բաղկացած աշակերտական տետրի էջերում. աշխատանքը բաժանվում է երկու մասի՝ սևագրության (2-րդ մաս) և մաքրագրության (1-ին մաս), ստուգվում է միայն մաքրագրությունը՝ կարմիր գույնի միջուկով.
- 14) փոխադրության նյութը (տեքստը) կամ նյութի վերնագիրը (դասագրքի, ձեռնարկի էջանշումով, հրատարակման տարեթիվով տվյալները և գնահատման չափանիշները) հաստատությունները քննության օրը ստանում են ԳԹԿ-ից կամ ԿԳՍ նախարարությունից՝ էլեկտրոնային եղանակով.
- 15) 9-րդ դասարանում բանավոր քննությունները կազմակերպելու, անցկացնելու և գնահատելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են հաստատության տնօրենը կամ նրա նշանակած ուսուցիչը (հանձնաժողովի նախագահ), տվյալ առարկայի ուսուցիչը (քննող ուսուցիչ) և ընթերական (տվյալ կամ հարակից առարկայի մասնագետ).
- 16) սովորողները քննասենյակ են մտնում ցուցակում իրենց անունների հերթականությամբ համապատասխան.
- 17) սովորողների ցուցակում սովորողն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում է քննատոմսը.
- 18) քննատոմսը ընտրելուց հետո սովորողը քննասենյակում ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանները, լրացուցիչ հարցերը և դրանց պատասխանները.
- 19) սովորողի պատասխանը գնահատվում է **20-միավորանոց** համակարգով.
- 20) «Հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Օտար լեզու» առարկաների բանավոր քննությունների հարցաշարերը կամ հարցատոմսերը կազմում են հաստատության մեթոդիավորումները՝ ըստ ԳԹԿ կողմից մշակված և տրամադրված նմուշների: «Հայ գրականություն» և «Օտար լեզու»

**ԿԱՐԳ**

առարկաների քննական առաջադրանքների հարցաշարերը և հարցատոմսերը կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից, **«Հայոց պատմություն»** առարկայի քննական առաջադրանքները՝ 6-9-րդ դասարանների ծրագրային նյութից:

21) **9-րդ դասարանում «Մաթեմատիկա» և «Բնագիտություն»** առարկաների քննությունների կազմակերպման, անցկացման, ստուգման և բողոքարկման ընթացակարգը տրված է սույն աշխատակարգի 19-59 կետերում:

13. **12-րդ դասարանում** պետական ավարտական քննություններն անցկացվում են՝

1) **«Հայոց լեզու և հայ գրականություն»** առարկայից՝ գրավոր՝ **դեկտեմբերին** կամ **հունիսին**, քննությանը տրվում է **120 րոպե**:

2) **«Մաթեմատիկա»** առարկայից՝ գրավոր՝ **դեկտեմբերին** կամ **հունիսին**, քննությանը տրվում է **120 րոպե**:

3) **«Հայոց պատմություն»** առարկայից՝ գրավոր՝ **դեկտեմբերին** կամ **հունիսին**, քննությանը տրվում է **120 րոպե**:

4) **«Դուս գրականություն»** առարկայից՝ բանավոր՝ **ռուսերենով ուսուցմանը դասարանների համար՝ դեկտեմբերին կամ հունիսի քննաշրջանի ընթացքում՝** ըստ սովորողի ցանկության:

5) **«Ֆիզկուլտուրա»** առարկայից՝ ստուգարք, ուսումնական պարայմունքների ավարտից հետո՝ մինչև քննաշրջանի սկսելը (առաջին կամ երկրորդ կիսամյակների ավարտին): **Օրը որոշում է հաստատությունը:**

14. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների՝ հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա (ԱՈՒՊ):

15. Հատուկ հանրակրթական դպրոցներում գործում է սույն աշխատակարգը՝ պահպանելով ավարտական դասարանների համապատասխանությունը:

16. Քննական գրավոր աշխատանքները, մինչև դրանց ստուգման ավարտը, պահպանվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում:

17. Քննությունից բացակայած կամ ուշացած Մեդալի հավակնորդ սովորողը գրկվում է Մեդալ ստանալու իրավունքից:

18. Ավարտական, պետական ավարտական (9-12-րդ դասարաններ) քննությունները կազմակերպվում են ավարտական քննական կենտրոններում:

19. Քննական կենտրոն է դառնում յուրաքանչյուր Հաստատություն: Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե տվյալ ավարտական քննական կենտրոնի ղեկավարն է: 9-րդ դասարանի **«Մաթեմատիկա»** առարկայի քննական կենտրոնները և դրանց ղեկավար կազմը հաստատում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարը:

20. Քննական կենտրոնում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը կարող է նշանակել օգնական, հերթապահներ:

21. Քննասենյակներում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը նշանակում է քննության ընթացքի կազմակերպիչներ, ովքեր չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

22. Մինչև 30 սովորող ունեցող քննասենյակում աշխատանքները համակարգում է 2 կազմակերպիչ: 30-ից ավելի սովորող ունեցող քննասենյակում առաջին 30 սովորողների համար՝ 2 կազմակերպիչ, մեկական կազմակերպիչ՝ յուրաքանչյուր հաջորդ 30-ի համար, ևս մեկ կազմակերպիչ՝ վերջին 1-30 սովորողների համար:

23. Քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

24. Քննական կենտրոնի ղեկավարը կամ

օգնականը քննությունը սկսվելուց մեկ ժամ առաջ կատարում է կազմակերպիչների գրանցում և վիճակահանությամբ բաշխում կազմակերպիչներին՝ ըստ քննասենյակների:

25. Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

26. Սովորողը քննություններին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով կամ ծննդյան վկայականով, իսկ մեդալի հավակնորդները ներկայացնում են անձնագրով կամ հաստատության տնօրենի կողմից տրված տեղեկանք՝ լուսանկարով: 9-րդ դասարանի սովորողը **«Մաթեմատիկա»** առարկայի քննությանը ներկայացնում է նաև Հաստատության կողմից տրված լուսանկարով տեղեկանք:

27. Սովորողը նախաբառի հերթապահի մոտ վիճակահանությամբ որոշում է իր խմբի համարը, քննասենյակում, խմբում վիճակահանության թերթիկի միջոցով որոշում իր նստարանի համարը: Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է սովորողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, վիճակահանված նստարանի համարը: Սովորողը ցուցակում ստորագրում է իր տվյալների տողում՝ *«Նստարանի համարը»* սյունակում: 9-րդ դասարանի **«Մաթեմատիկա»** առարկայի քննության ժամանակ սովորողին տրամադրվում է պատասխանների ձևաթուղթը, որտեղ նշվում է տվյալ սովորողի խմբի ցուցակում արձանագրված համարը:

28. Քննասենյակում կայացած վիճակահանության արդյունքի համապատասխան՝ երկրորդ կազմակերպիչն օգնում է սովորողին գտնել իր տեղը և չի թույլատրում տեղափոխություններ կատարել:

29. Քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցչից ստանում է քննական առաջադրանքների փաթեթները:

30. Քննությունը սկսվելուց առնվազն կես ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի պատասխանատուին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի առաջադրանքներից:

31. Ավարտական քննություններին սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց-ձեռնարկներ:

32. Սովորողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննասենյակ է բերում քննական առաջադրանքների ծրարները: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարների ցուցադրում է սովորողներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա: Ծրար(ներ)ը բացելու համար պատասխանատուն հրավիրում է առաջին նստարան(ներ)ին նստած սովորողներից մեկին: Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում հրավիրվում է սովորող այլ շարքից: Ծրարների բացման մասին նշվում է արձանագրության մեջ:

33. Քննասենյակի պատասխանատուն (կազմակերպիչը) սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաև բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգն ընթերցելուց և սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են առաջադրանքները: Սովորողը առաջադրանքը ստանալուն պես շապիկի համապատասխան մասում գրում է քննասենյակի և իր նստարանի համարը: 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայի քննության ժամանակ աշակերտը լրացնում է նաև պատասխանների ձևաթղթի վերևի մասը: Առաջադրանքների վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, ստույգությունը և գրատասխանի մշում է քննության սկզբը և ավարտը:

34. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում, քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ և միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:

35. Խմբի կազմակերպիչը ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո փաթեթավորում և հանձնում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչին:

36. Առաջադրանքի բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը չեն քննարկվում:

37. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող առաջադրանքները փոխարինվում են նորով:

38. Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի կենտրոնի ղեկավարից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել Նախարարության, շրջվարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժինների և ԳԹԿ-ի ներկայացուցիչները:

39. Քննության ավարտից 20 րոպե առաջ քննասենյակի պատասխանատուն սովորողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները համապատասխան ձևաթղթերի վրա անցկացնելու մասին:

40. Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախագուշակված սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից:

41. Հեռացվող սովորողից վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձևաթղթի էջի վրա գրվում է՝ **«Հեռացված է քննությունից»:** Քննասենյակի և խմբի արձանագրությունների մեջ գրանցվում են այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը:

42. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր առաջադրանքը և ստորագրում իր անվան դիմաց: Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա նա կարող է այն հանձնել և, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից: Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը:

43. Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում:

44. Պատասխանատուն առաջադրանքները քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված առաջադրանքները վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակասների, քննությունից հեռացվածների, որևէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (եթե կան):

45. Քննության ավարտից հետո սովորողների ցուցակները պահվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ՝ մեկ տարի:

46. Քննական առաջադրանքները, բացի 9-րդ դասարանի **«Մաթեմատիկա»** առարկայից ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ժամը 14:00-ին, ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված առաջադրանքների ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է: 9-րդ դասարանի **«Մաթեմատիկա»** առարկայից քննական աշխատանքները ստուգվում են ԳԹԿ-ում:

47. **9-րդ դասարանում** ստուգող հանձնաժողովի անդամների 50%-ը տվյալ առարկայի

մասնագետներ են:

48. **12-րդ դասարանում** ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

49. Քննական արդյունքները գնահատելիս քննական հանձնաժողովի անդամների միջև տարածայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց բլեարկությամբ:

50. Զվեարկության արդյունքներում ստացված հավասար ձայների դեպքում վճռորոշ է՝

1) **4-րդ դասարանում դասավանդող ուսուցչի առաջարկած գնահատականը,**

2) **9-րդ և 12-րդ դասարաններում՝ քննական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը,**

3) *Նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամ (ներ)ը արձանագրության մեջ կարող է(են) կատարել հատուկ նշում:*

51. Ստուգումն իրականացվում է ԳԹԿ-ի կողմից իրապարակված *«Ցուցումներ»*-ի պահանջներին և չափանիշներին համապատասխան: Գրավոր աշխատանքի սևագրությունը չի ստուգվում և չի գնահատվում:

52. **Քննական աշխատանքների արդյունքները, բացի 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայից, հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 14:00-ին:** Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ: 9-րդ դասարանի **«Մաթեմատիկա»** առարկայից քննական աշխատանքների արդյունքները Հաստատությանը տրամադրվում է ԳԹԿ-ի կողմից՝ քննությունների անցկացումից հետո 5 օրվա ընթացքում:

53. Քննական կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ դասարանների, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

54. Բանավոր քննությունները ձայնագրվում և/կամ արձանագրվում են: Արձանագրության մեջ ներառվում են հարցատոմսերի համարը, հարցերը, պատասխանները: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները և տվյալ սովորողը:

55. Քննությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների գնահատման վերաբերյալ բողոքները կարող են լինել՝

1) *քննության անցկացման կարգի խախտման մասին,*

2) *քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին,*

3) *թեստերի բովանդակության մասին:*

56. Սույն կարգի 55-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոք ներկայացնել քննական կենտրոնի ղեկավարին քննության ավարտից ամիջապես հետո: Կենտրոնի ղեկավարը տեղում քննարկում և պատասխանում է բողոքը ներկայացնողին:

57. Սույն կարգի 55-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են ստուգող կամ քննող հանձնաժողովի նախագահին՝ բանավոր քննության դեպքում՝ քննության պահին կամ մինչև քննասենյակից դուրս գալը, գրավոր քննության դեպքում՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

Գրավոր քննության բողոքի արդյունքները, ոչ ուշ քան դիմումը ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում են դիմողին:

58. Դիմում-բողոքների քննարկումից հետո կարող է որոշում ընդունվել քննության գնահատականի պահպանման կամ բարձրացման, ինչպես նաև իջեցման մասին, որը հրապարակվում է և ուղարկվում ԳԹԿ:


59. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադատության կարգով, Նախարարություն և (կամ) դատարան:





## ՀԻՇՏԱԿԻ ԽՆԿԱՐԿՈՒՄ

### Ի ԽՈՐՈՋ ՄՐՏԻ՝ ՊԱՏԿԱՌԱՆՔՈՎ ՈՒ ՃԱՎՈՎ



Հարգելի «Լուսարար», Ձեզ ենք դիմում մենք՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանի (այժմ՝ Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջ) 1970-ական թվականների շրջանավարտներս: Անողոր ճակատագրով մենք տեղահանվել ենք Շահումյանից, Գետաշենի ենթաշրջանից, Գանձակից, Իսմայիլիից, այսօր ապրում ենք մեր նախնիների բնօրրանից, հայրենի եզերքից հեռու՝ պահպանելով հայկականը ու կարողությունը օտար ափերում, հոգևոր հայրենիք դարձնելով մեր ոսկեդենիկ մայրենին, սիրելով, պահպանելով և բազմապատկելով մեր ինքնության կռվանքը:

Երիտասարդական վառ օրերի ներշնչանքով ենք հիշում մեր ուսանողական տարիները Շուշիում՝ հարազատ կրթօջախում, մեր սիրելի դասախոսների աստղաբույրը, որի փայլումն աստղն էր հարգարժան մանկավարժ Ալբերտ Խաչատրյանը՝ բնավորությամբ բարի, հայրական հոգատարությամբ թուրքի ճիրաններից մեզ փրկարար:

Մեր կյանքի ամենատպալվորիչ ու պայծառ հիշողությունները կապված են ուսումնարանի հետ, որտեղ անցել են մեր պատանեկության փոթորիկուն օրերը: Մեր կրթօջախն ու դասախոսները մեզ ավանդեցին ազնիվ ապրելու ու արարելու, ողջ կյանքում ճշմարտությունը սիրելու և դրա համար պայքարելու մեծագույն արվեստը: Այնտեղ ամեն ինչ այնքան պարզ էր ու անկեղծ:

Մենք սովորեցինք՝

- Թե ինչպես պիտի ապրել կյանքում,
- Թե ինչպես պիտի նայել կյանքին,
- Թե աշխարհում ինչն է անգին,
- Թե աշխարհում ինչն է էժան...

Ու երբ դժվար ու հեշտ պահերին, արևոտ ու ցուրտ օրերին հանկարծ հուշերի ձևով համնում է հարազատ ուսումնարանը՝ որպես իմ ու բարի ժամանակների վերհուշ, ջինջ ու երազով լեցուն կյանքի խորհրդանիշ, լցվում ենք քաղցր ու ուժ տվող մի զգացումով, որ ոչնչի հետ փոխել չի լինի:

Ուրեմն, ինչ հարթության վրա էլ լինեց, ինչ բարձունքի էլ որ հասած լինեց, կյանքի աստիճանին հերթական քայլը դնելիս պետք է հիշեմք մեր ուսումնարանը, որովհետև ամեն ինչի հիմքն է կարևոր, հիմք, որ ստեղծվել է տարիներ առաջ:

Մեզ անչափ ոգևորել է Ձեր թերթում տպագրված «Վաստակաշատ մանկավարժը, հասարակական գործիչը» հոդվածը՝ նվիրված մեր սիրելի դասախոս Ալբերտ Խաչատրյանի ծննդյան 80-ամյակին: Նա բարձր է գնահատվել պետականորեն՝ պարգևատրվելով «Վաչագան Բարեպաշտ» մեդալով, արժանացել Շուշիի պատվավոր քաղաքացու կոչման: Նա հիանում էր Արցախի աշխարհի հաղթարշավի բոլոր ձեռքբերումներով, օրեցօր վերականգնվող հայրենի Շուշիով:

Սակայն դժվար է հաշտվել այն դառը մտքի հետ, որ մեզ հետ չէ բուրդի կողմից սիրված ու հարգված անձնավորությունը՝ դեռ եռանդուն, գործունյա, ավյունով լեցուն... Նա իրենից հետո թողեց բարու, սիրո, նվիրվածության, ընկերության, բարեկամության անմար հետագիծ:

Հիսուն տարիների հեռվից մենք՝ շրջանավարտներս, հիշեցինք մեր հարգարժան Ա. Խաչատրյանի սրտառու պատգամները՝ ձեռք բերած մանկավարժական գիտելիքները կյանքում կիրառել սրբությանը: Մենք ստացանք մեր սիրելի դասախոսի սրտի հուրն ու ջերմությունը, նուրբ հոգու անսպառ լույսը, հոգատարությունն ու քնքշությունը: Կյանք տարանք ավանդույթներով հարուստ հարազատ կրթօջախի կամարների տակ ստացած գիտելիքները, նվիրվեցինք հայրենի դպրոցականների կրթության ու դաստիարակության վեհ առաքելությանը՝ մայրենին դարձնելով լույսի ճառագայթ:

Սակայն 1992-ը խաթարեց մեր բնականն կյանքը. մենք տեղահանվեցինք, ցրվեցինք աշխարհով մեկ, բայց չմոռացանք մեր կրթօջախն ու սիրելի դասախոսներին: Տեսանք բազում դժվարություններ՝ հայացքներս հառած մեր գեղատեսիլ հայրենի եզերքին, մեր օջախներին:


Տա՛ Աստված՝ փրկվեն մեր գեղաշուք բնակավայրերը, վերադառնանք ու ազգովի տոնենք մեր փրկված օրրանում, հայրենի օջախում:

Մեր սիրելի Խաչատրյանը սերտ կապ ուներ մեզ հետ: Համացանցով հաղորդում էր այն մեծագույն հաղթանակների, հաջողությունների, ձեռքբերումների մասին, որ իրականացվում են Արցախում: Նա ուներ բազում երազանքներ, մտահղացումներ, որոնցով ոգևորում էր մեզ՝ հայրենի եզերքից հեռու ապրողներին՝ վերադառնալու, տեսնելու, հիանալու:

Այսօր խորապես ցավում ենք մեր սիրելի մանկավարժի մահվան առիթով՝ սգավով, որ այլևս չենք լսելու նրա բարի խորհուրդները: Արտի թրթռով ու անհուն երախտագիտությամբ կհիշենք սիրելի ուսուցչին, մեր երջանից մեզ նա կապի հավերժ, ինչպես մայրենին ու հայրենիքը հավերժ: Նա մանկավարժ էր մեծատառով, մեծ՝ ուսուցչական տաղանդով, իմաստնությամբ: Բարի հոգով նա մեզ ցույց տվեց կյանքի ճշմարիտ ուղին:

*Խոր կակիծով, հիշատակի հավերժ պահպանումով՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանի տարբեր տարիների շրջանավարտներ Ռուսաստանի Դաշնությունից*

### ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ



ԱՆՎԱՆԻ ՇՈՒՆԵՑԻՆԵՐԸ

ճ ա կ ա տ ա գ ռ ի ն գանձված հարազատ ժողովրդի ու ծաղկուն քաղաքի անսփոփ բախտը...

Հայոց Շուշին իր գոյության ընթացքում հոշոտվել և ծվատվել է վայրագ ցեղերի խարոխի ասպատակություններից ու կոտորածներից, տմարդի ջարդերից ու ահասարսուռ ամենափոքր հրդեհներից: Քաղաքի սալահատակված փողոցներում քանի՞-քանի անգամ է հեղվել հայի արյունը, թալանվել եկեղեցիներ ու հայաստեղծ օջախներ, մորթվել ծերուկներ ու մանուկներ, ավերվել Աստծո տներ ու ասեղնագործ զմայլանքով թրծված հաչքաբեր, հային վայել ու հային պատվաբեր տաճարներ, հեքիաթասաց կամարակապ կամուրջներ, Աստծո հետ մենախոսող Խորաններ, շարականներ ու աղոթքներ մրմնջացող հաչվառներ ու ողբացող լուսաճաք Աստվածահեղ մոմեր... Քավ լիցի: Հայը կրկին վերակերտել ու ասեղնագործել է Շուշին, հոգի ու մարմին նվիրել նրան:

Եվ այսօր, երբ հինավուրց Թագուհին կրկին փթթում քաղաքի կերպար է ստացել, ապա Շուշիի դժվարին այդ ազատագրական պայքարում կրկին փայլել է մեր խիզախ ազատամարտի գինվորը, նրա աննահանջ ու չհատվող բազկի ուժը... Ալբերտ Խաչատրյանը մեր Ազատամարտի առավել հայտնի մարտիկներին և պատվավոր տեղ է հատկացրել՝ զետեղելով կենսագրական տեղեկություններ, տասնյակ անգամ ստուգված ու նորեն վերստուգված և հավաստված փաստեր ու տարեթվեր...

Գրքի արժեքավոր ու լավագույն կողմերից մեկն էլ, ահավասիկ, տասնյակ նկարների տեղադրումն է: Լուսանկարներ, որոնց մի մասը հազվագյուտ է՝ տառապանքով ու դժվարությամբ հայթաթված կամ պեղված: Գրքում երկու մամուլ ծավալով երեք խումբ ներդրումներում պարփակված պատմական, նորօրյա և ավերված Շուշիի ընտրամի լուսանկարներում համադրված է լեռնային գեղեցկուհու արյամբ վանկարկված անցյալի ողբերգական, իսկ այսօր հերոսական օրերի զարկերակը: Շուշին թիրախ էր քոչվոր խավարանով ցեղի հոգեպես խեղձված կանեփագլուխ հետնորդների համար: Երկի թե ի հակադրումն այս գորշության, ավազակային վայրենի ըմբոստանքներին ի հակակշիռ, հուգախառնիկ հնչեղությամբ հնչում է Ալբերտ Խաչատրյանի միտքը առ այն, որ «աշխատանքը խոնարհման ու մեծարման տուրք է անվանի շուշեցիներին, նրանց թողած մեծարժեք ու ազգանվեր ժառանգությանը»: Ճիշտ ու անփոփ արժևորում, որի առաջ անսքող նվիրվածությամբ ու սիրատածությամբ խոնարհվում է Խաչատրյանը:

Իր թե՛ բեկանված ու անբեկ, թե՛ ավերված ու լուսայգի արփիկ պես փթթող, թե՛ հոշոտված, բայց և ծնծաղկի հուգախառնիկ գույներով ճերմակ ու անախ ծյուններում ծիկակալին տվող մշտապառ խոյացող հայատունկ ծառ է մեր Շուշին, մեր թագը, մեր Հաղթանակը, մեր խաչանախշ Արեգակը: Եվ երիցս ճիշտ է Արցախի անվանի ու հարգված վաստակավոր մանկավարժ Լարիսա Ղազարյանի խոսքն առ այն, որ Ալբերտ Խաչատրյանի տարիների տքնանքի արդյունքը վերաճել է մի գրքի: Գիրք «պատվարժան շուշեցիների մասին, որոնք թողել են հետագիծ հասարակական կյանքում, մեծ ներդրում ունեն գիտության, տեխնիկայի, կրթության, բժշկության, արվեստի, թատրոնի, քաղաքականության բնագավառներում: Նրանք բարձր հոգևոր կերտվածքի կնիքը կրող իմաստուն մարդիկ են՝ հմուտ գործավարներ, գիտնականներ, ճանապարհորդներ, բարերարներ, բժիշկներ, գործարարներ»:

Խոսքս չձգեմ:

Իրոք, արժեքավոր գիրք է ստեղծել Ալբերտ Խաչատրյանը: Արժեքավոր ու լուսածիր: Սա հաղթանակ է: Արված ու ասված մնայուն փաստագիր մի խոսք: Մեր՝ արցախցիներին խոսքը՝ անկաշառ, ամրակուռ ու բոլորին պատվաբեր:

**Սերգեյ ՍԱՐԿՈՍՅԱՆ**  
**ՌՌ, Պոկրով**





